ԵՂԻՇԷ ՏԷՐ ՌԱԼԻՔՄԱՆԴՐԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑ.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՅԻ

(Փորձեր)

ԹԻՖԼԻՍ

Тип. Груз. Изд. Тов. | Տպարան Վրաց Հրատ. Ընկ.

1900

ԵՂԻՇԷ ՑԷՐ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՅԻ

(Փորձեր)

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԹԻՖԼԻՍ
Тип. Груз. Изд. Тов. } Տպարան Վրաց Հրատ. Ընկ.
1900

Дозвол. Ценз. г. Тифлисъ, 24 сентября 1899 г.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՅԻ

Շատ են երգել ուրիշները,
Սիրոյ ուրախ վառ գարուն.
Վիճակել չէ ինձ իմ քաղդը,
Երգել սիրոյ վառ գարուն...

Ե. Ռ.

ՆՈՒԷՐ ՍՐ. Ն-ԻՆ.

—

Ես միշտ կուզէի, որ քո երգերում,
Միշտ երգուեր սիրոյս, տխուր երգերը.
Եւ քո թաւշապատ, կարմիր շուրթերը,
Աղօթեր Վէհին, սիրոյ սաղմոսներ...

—

Ես միշտ կուզէի, որ քո շրթունքներ,
Արտասանէին, սուրբ սիրոյ խօսքեր.
Եւ քո կեանք եռող, բոցոտուած սիրտը,
Անշէջ վառ պահէր, անարատ սէրը...

ՄԵՂՄ..., ՇԱՏ ՄԵՂՄ ՀՆՉՈՒԵՑԻՆ.

—

Մատաղ սրտիս դառն վշտերը,
Կրկին անգամ նորոգուեցին.
Եւ այս անկեղծ սիրոյ խօսքեր,
Մեղմ..., շատ մեղմ, հնչուեցին...

—

«Սէր շնչեցիր, դու իմ սրտում
Եւ կեանք տուիր ինձ նորից,
Ինչպէս վարդը գարնան ցողում,
Կեանք է առնում արևելքից.

—

Բոյսի նման անապատում,
Պիտ թառամէի յաւիտեան.
Թէ որ շուտով սիրոյ սաղմեր,
Կեանք չ'տային իմ սրտին...»

Ապրել եմ ուզում.

—

Գալիս է գարուն, զարդարում դաշտեր,
Ծաղկանց բուրմունքով, երկիրը լցնում.

Գառնում են մեզ մօտ, թռչնոց երամներ,
Եւ ծլվլոցով, բոյներ են հիւսում.

—

Նոքա երգում են. բայց ինչ են երգում,
Արդեօք, սուգ ու լաց, թէ ուրախութիւն.
Կան, այո՛ նրանցից, ուրախ են երգում,
Կան և նրանցից, սև օրեր երգող...

—

Ես էլ սրանց հետ, երգում եմ սև օրս,
Որպէսզի մի քիչ, հանգիստ տամ սրտիս.
Թողած հողի տակ, սիրոյ հրեշտակիս,
Այս դառն աշխարհում, ապրել եմ ուզում.

Եւ ես սիրեցի.

—

Եւ ես սիրեցի, հրավառ աչեր,
Կենսատու լուսով կենարար հոտով.

Եւ ես պաշտեցի, կարմիր շրթունքներ,
Եդեմեան դրախտի, անուշ բուրմունքով.

ԱՐՏՑՈՒՆՔՆԵՐ.

Երբ տեսնում եմ փայլուն արև
Գարնան ուրախ զարթ օրեր,
Կանաչ դաշտեր բիւր ծաղիկներ,
Թքեղ սիրուն զարդարուած,
Երբ լսում եմ մօտ ձորակի
Պաղ աղբիւրի կարկաչիւն,
Եւ սրանց հետ հովիւների
Սրնգի անուշ մեղեդին,
Այդ ամէնից ես հիացած,
Ծառի շուքում լուռ նստում եմ,
Եւ տոչորուած զգացմունքով,
Ցնորքներ եմ մտածում...

Թէ ինչպէս ես փայփայում եմ
Իմ սիրելոյս փաղաքշում.
Եւ զմայլուած նրան նայում,
Այդ ցնորքովն յագենում.
Բայց երբ յանկարծ ուշքի գալով,
Տեսնում եմ ես միայնակ,
Նոյն հոգսերով ընդնաւորուած,
Որ լինում է աշխարհում,
Այն ժամանակ անիծում եմ
Սև և կապոյտ իմ ծնունդ...
Երազ դարցած իմ յոյսերին,
Յետևում են «արտցունքներ...»

«Քնեզ».

—

Այժմ կեանքիդ, ուրախ օրերը,
Քեզ ժպտում են, անդադար.

Երջանկութեան, ուրախ ժամեր,
Միշտ անցնում են, անդադար.
Ցանկանում եմ, մինչև 'ի մահ,
Գարուն ժպտայ, քեզ ուրախ.
Եւ մաղթում եմ, քեզ հրեշտակիս,
Սէր յաւիտեան և անխախտ.
Ընծայում եմ քեզ իմ կողմից,
Իբր յիշատակ այս տողեր,
Որ դու յիշես, մի ժամանակ,
Թշուառ դժբաղդ քո Ե—իդ...

ԵՒ ԵՍ, ՀԱՒԱՏՈՒՄ ԷԻ.

Եւ ես, հաւատում էի...
Քո տուած երդմանդ, և խոստումներիդ.
Եւ ես, հաւատում էի...
Քո ինձ նուիրած, բիւր համբոյրներիդ ..

Ոտքերդ ընկած, ահա՛,
Սէր եմ աղերսում, սիրել խօստանում,
Ի՞նչ ես ծիծաղում,—ասա՛,
Մթթէ չես զգում, որ սիրտս ես մաշում...

ԹՈՂ, ԿՈՉԵՆ, ԾԱՌԱՅԻՐ ԳՈՒ.

Թող քեզ կոչեն խելագար,
Թող քեզ կոչեն խեղկատակ,
Թող քեզ ծաղրէ կոյր անբոխ,
Թող քեզ անէ ոտնակոխ,
Դու ծառայիր գաղափարիդ
Դու մունջ դնա քո ճամբադ.
Վաղ թէ ուշ մի օր արև կենարար,
Կ'կենդանացնէ և քարէ սրտեր...

Ն Ո Ի Է Ր ընկերներիս։

—

Երբ մի անգամ պարտիզում,
Ես ման եկայ մալիս ամսում,
Այնտեղ տեսայ ես վարդենուն,
Բացուած փարթամ կոկոններով.
Շատ զննեցի ես այդ վարդին,
Հոտոտեցի և հիացայ,
Կարմիր վարդը գեղաձիծաղ,
Հանդարտ ասաց այս խօսքեր.
«Շատ մի նայիր կարմիր գոյնիս
Եւ մի յիանար հոտովս,
Որովհետև, դոքա երբէք,
Ինձ չեն անուամ երջանիկ...
Կ'գայ ձմեռ և իմ օրեր
Կ'սևանայ կ'չքանայ,
Եւ իմ գլխին բուք բորաններ
Քանի՞ անգամ կ'բռնանայ...

Ահա այսպէս ես անբաղխտ եմ.
Բայց մի՛ք կարծիլ, ով դուք մարդիք
Որ կարմրութեամբ անուշ հոտով
Երջանկութիւն կ'լինի...

---

*
* *

Ծառոց հովերում շրջելով մենակ,
Ա՜խ քեզ եմ յիշում երկնային հրեշտակ,
Կարօտում եմ քեզ, ես այդ վայրկեանում
Ինչպէս բլբուլը չորացած վարդին...

Կենդանի մեռած եմ ա՜խ քեզի համար,
Ճնշուում է հոգիս քեզ չ'տեսնելով,
Էակ արժանի իմ հոգոյս հատոր,
Ա՜խ ըսպէ անգամ, ես չունիմ դադար...

Ազատիր խնդրեմ, ինձ այս ցաւերից,
Սիրոյ կապանքները չ'ճնշեն սիրտս.

Կամ թէ չէ գոնէ տուր ինձ քո ձեռովդ
Թոյնի բաժակը... ինձ, այդ է մնացել...

ԿՈՐՉՈՒՄ ԵՆ...

Քնար առած իմ ձեռը,
Ես երգում եմ անդատար,
Եւ իմ տխուր բիւր երգերը,
Անհետ կորչում են դէպ հեռուն...

ՀԱՅՐՍ ՄԻՕՏ ԻՆՁ ԷՐ ԱՍՈՒՄ ՄԱՆՈՒԿ ԹԱՄԱՆԱԿՍ.

Երբ որ մանկական փոքր հասակում
Տեսնում էի ես շատերին տխուր,
Զարմանում էի թէ ինչու նրանք էլ,
Ինձպէս չեն ուրախ և միշտ խնդադէմ։

Շատ անգամ խաղից ես մեր տուն գալով,
Պատմում էի հօրս իմ տեսած բաներ.

Թէ ինչպէս մէկին ուրախ եմ տեսնում,
Բայց մի քանիսին տխուր ու տրտում։

—

Հայրս միշտ ահա այսքանն էր ասում.
«Մի թէ կարծում ես զաւակ աննման,
Թէ բոլորն էլ քեզ պէս խափուսիկ խաղով,
Պիտի լիանան, հրճուին, զարճանան։

—

Նոցա մեծ մասը, իրենց սրտերում,
Ունեն շատ վշտեր, որոնք չեն թողնում,
Քեզպէս միշտ ուրախ, խաղան թռչկոտան,
Եւ վազէն այնտեղ, ուր որ կամենան։

—

Երբ կ'մեծանաս և հասակ կառնես
Դու էլ նրանց պէս կունենաս վշտեր...
Կ'գայ ժամանակ դու էլ միշտ տխուր
Անթիւ հոգսերով բեռնուած կ'լինիս...

—

Բայց այժմ քանի դեռ դու մանուկ ես
Գնա, և խաղա, ընկերներիդ հետ

Կ'գայ այն օրը և դու կիմանաս
Ինչ է վիշտ ու ցաւ հոգսեր և տանջանք...»

—

Մոռանում էի իսկոյն ամեն ինչ,
Եւ կրկին վազում դէպի ընկերներ.
Ի բոլոր սրտէ ուրախ և զվարթ,
Նորից սկսում առօրեայ խաղեր...

—

Իսկ այժմ ահա, չորս կողմս մռայլ,
Էլ չէ փլփլում, մայիսուան արև...
Վշտերս շատ է ինձ մխիթարել,
Չեն կարող նոյն իսկ, թեւաւորք անթև։

—

Ախ՝, քանի անգամ, ձեզ ոսկի ժամեր
Միշտ երանում եմ և պիտ երանեմ,
Քանի կրկնակի բարցւում են վշտեր,
Եւ միշտ նորոգում իմ անբոյժ վերքեր...

—

Ավսոս քեզ քաղցրիկ, մանկութեան օրեր
Դուք շատ ունէիք, բերկրութեան ժամեր.

Երանի նորից դուք յետ դառնայիք
Եւ ինձ թշուառիս, նոր կեանք շնչէիք...

ՆՈՑՆՆ Է ԲՈԼՈՐԸ. ՄԻՌՑՆ, ՄԵՆՔ ՆՈՑՆԸ ՉԵՆՔ.

I

Յիշում ես արդեօք, այս նեղ ծառուղին,
Վկայէ նա մեր, անցրած ժամերին.
Յիշում ես ասա՛, թէ ինչպէս գեղ էր,
Եւ թէ լուսինը, ինչպէս փայլում էր.
Լուսինը պայծառ, փայլում փլփլում,
Երկիրն էլ յոգնած, քնած խրոմփում.
Մենք էինք միայն, զգացուած խօսում,
Մեր սիրոյ երդում, կրկնում ու կրկնում...
Յիշումես նաև, ինչպես ծառերը,
Միմեանց մէջ հանդարդ քշփշում էին.

Եւ իրանց մեղմիկ հանդարտիկ երգով,
Քաղցր շըշիւնով՝, հովհարում էին...
Թռուցիկ հանդարդ, զովարար հովը,
Սուլում էր հանդիստ, ծածանում արտը.
Նա քո շրթունքից, կամաց քաղում էր,
Սիրո՛յ, հրճւանքի՛, կիզիչ համբորներ...
Այստեղ գետնի տակ՝, փոքրիկ ծղրիդը,
Երկար ցըտցըտում, իւր երգնէր երգում.
Այնտեղ գիշերուայ, քուն ու բուէճը,
Ահա՛, այս օրուայ, սուգն էին երգում...
Այստեղ այս մօտիկ, փոքրիկ առուակը,
Հանգիստ հոսում էր, խաղում եզերքով.
Նա մեզ ասում էր, որ մի օր ինքը,
Պիտի ողողուի, մեր արցունքներով...
Յիշո՞ւմ ես արդեօք, որ մի աստղ ընկաւ,
Մենք յանկարծ միմեանց, երես նայեցինք.
Կարծես այդ աստղը, մեզ լիշեցրաւ,
Փշոտ աշխարհի, սին՝, ունայն, մեր կեանք.

Ահա այս տեսակ, շատ երեկոներ,
Մենք անցրել ենք, ուրախ երջանիկ.
Սէր էինք շնչում, և սիրոյ սաղմեր,
Բոյն էին դնում, ձգում արմատներ...

II

Այժմ անփոփոխ, նոյնն է ծառուղին,
Եւ երկնի վրայ, նոյն փայլուն լուսին.
Բայց նա մեզ համար, այնպէս չէ փայլում,
Առաջուայ նման մեզ զմայլեցնում...
Ծառերն էլ նոյնն են, բայց նրանց տեսքը,
Մեզ չէ գրաւում, այնպէս էլ գեղ չէ.
Մեր այն հրավառ սուրբ սիրոյ խօսքը,
Սառել ու ցնդուել, անհետ կորել է...
Փչում է նոյնպէս, նոյն այն մեղմ հովը,
Կամացուկ սուլում, առաջուայ երգը.
Բայց քո շրթունքից, սիրոյ համբոյրները,
Էլ չէ փախցնում, դէպ այլուած սիրտը...
Այստեղ գետնի տակ, ուրախ ծիլերը,

ՀՈՒՆԴԱՍ... Գ. ԱՍՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Չէ զվարճացնում, իւր ցրտցրտոցով.
Իսկ բուն բուէճը, իրենց գուժկանով,
Չեն սարսեցնում, նոքա իմ սիրտը...
Երկինքը պարզ է, աստղերը փայլում,
Աստղերը էլի, յանկարծ ընկնում են
Մենք անցեալի պէս, միմեանց չենք
նայում,
Ընկած աստղովն՝ էլ, չենք տարակուսում,
Առուակը խաղում, լուսնի շիթերով,
Հանդարտ հոսում է, էլի նոյն շաւղով.
Անցածը կրկին մեզ լիշեցնելով,
Տանում է իւր հետ, աղի արտցունքներ...
Նոյնն եմ և ահա, առաջրդ կանգնած,
Դու էլ խօ նոյնն ես, առաջս կանգնած.
Որքան էլ անթիւ փայլին լուսնեակներ,
Չեն կարող դարձնել, նօրից այն օրեր...
Ամէն ինչ նոյնն է, բայց մենք, նոյնը չենք,
Հէնց այդ է պատճառը, տարակոյս չկայ,

Որ մեզ բնութեան, հրաշագեղ տարերք,
Զեն զմայլեցնում, կեանքի կայծ չ'կայ...

ՆԱ ՄԻ ՈՒՐԻՇ, ՀՈԳՍ ԷԼ ԶԳԱՑ.

Մանկիկն անմեղ, դառն լալիս է,
Նա չ'գիտէ, ուրիշ հոգսեր.
Լացի պատճառը, միայն կաթն է,
Եւ մօր քաղցրիկ չաղ ստինքներ։
Անցաւ մի վայրկեան, էլի սկսեց,
Իւր աղիողորմ, դառը լաց ու կոծ.
Արդեօք նա ինչէ՞ց, էլի սկսեց.
Նա՝, մի ուրիշ հոգս էլ զգաց...

Երբ մի անգամ, սիրոյ չաստուածուհին ինձ երևաց,
Եւ սիրալիր, ուրախ յոյսերով ինձ գրաւեց,

Այն օրուանից, ես երդուեցի լինել նրան
երկրպագուն,
Չ'խնայել, կեանքս անգամ, որ դեռ նոր է,
և տոկուն...

—

Անցան օրեր, և ես մտայ, սիրոյ փշոտ
ասպարէզ.
Ճաշակեցի սիրոյ քաղցը, բայց թունաւոր
համբոյրներ.
Բայց այդ ուշ էր... սիրոյ կրակն ինձ
այրում էր տոչորում,
Եւ անողոք իմ բաղդը, դէպ անդունդն էր
ինձ տանում...

—

Ես դեռ էլի, վերջին ոյժով, դէպի
յառաջ եմ, միշտ դիմում,
Կեանքի յուսոյ, վերջին կայծը դեռ
այրւում է իմ սրտում.
Եւ այդ մի սին, հէգ խափուսիկ, կեանքի
կայծից, խափուելով,
Մինչև օրս, դեռ կռւում եմ, և պիտ
կռուեմ չ'ընկճուելով...

ԷԼ ՉԻ ԾԵԽԿԻԼ ՔՈ ՍԷՐԸ...

—

Եկաւ գարուն. կարմիր վարդը,
Պիտ բողբոջ է կանաչ է.
Սմիս չանցած նոյն այդ վարդը,
Կոկոններով կզարդարուէ։

—

Կանցնի օրեր. և կոկոնը,
Պիտի ծաղկէ գեղադէմ.
Եւ աննման իր բուրմունքը
Կ'տարածէ ամէն կողմ։

—

Օրեր կանցնեն. կ'թափուին տերևք,
Պիտի մնայ մերկ ճիւղեր...
Զար մարդկերանց անհաշտ ձեռօք,
Վաղուց արդէն չ'կան վարդեր...

—

Օրեր կանցնեն. կ'գայ ձմեռ,
Պիտի փչուին ցուրտ բուքեր.
Եւ մերձ 'ի մահ կարմիր վարդը,
Պիտ մրմնջայ աղօթքներ...

—

Կանցնի ձմեռ. միւս գարնանը,
Կ'կենդանայ մեր վարդը.
Եւ համարեայ, նոյն այդ կարգով,
Կ'կրկնուի վարդի կեանքը.

—

Բայց իմ սրտում նորից երբէք,
Էլ չի ծաղկիլ քո սէրը...
Նա նման չէ վարդին երբէք,
Նա, նման է, ապագուն...

—

Եւ մեզ նորից, չեն կրկնուիլ,
Մեր անցրած, սիրոյ օրեր...
Նոքա երբէք, միւս գարնանը,
Չեն կրկնուիլ, յաւիտեան...

ԻՆՁ ՄՆՈՒՄ Է ԼԱԼ ԵՒ ՍԳԱԼ...

—

Ինձ մնում է լալ, և սգալ,
Իմ նոր ծաղկած, կեանքի օրեր,

Ինձ մնում է, մի ելք գտնել,
Որ չ'տանջեն, իմ ցաւեր...

—

Մանուկ էի, աչքս բացի,
Լոյս աշխարհը դուր եկաւ.
Քիչ ժամանակ որ անցաւ,
Քաղցի կարօտ զգացի։

—

Կարդում էի, վարժարանում
Դասս պատրաստում գիշեր ցերեկ.
Դաս չ'գիտէի, մի անգամ,
Ասին ծոյլ ես, ու անպէտք։

—

Մեր գիւղումը մի անգամ,
Տեսայ մեղրի փեթակներ.
Սիրտս ուզեց, ինչ թաքցնեմ,
Հանել մեղրի հացիկներ։

—

Ձեռս տարի, բայց Աստուած իմ
Քանի քտնի, քիւր մեղուներ,
Տզտզալով, խայթեցին իմ
Գլուխ երես աչքեր ու ձեռներ։

Ծառի վրայ, երգեց սոխակ,
Ինձ դրաւեց իւր երգով,
Ծառ բարձրացի, բոբիկ ոտով,
Եւ կամէի, բռնել սոխակ։

—

Ձիւղը կոտրուեց, և ես ընկայ,
Քիթ ու պռունգս, ջարդեցի.
Տարին մեր տուն, ես պառկեցի,
Եւ մի շաբաթ տանջուեցի։

—

Զնաշխարիկ, կոյս սիրեցի,
Նա ինձ սիրեց, փայփայեց.
Բայց երբ նրան ձեռք մեկնեցի
Նա ինձ թողեց, ուրիշ սիրեց...

—

Ինձ մնում է լալ և սգալ,
Իմ նոր ծաղկած սիրոյ ժամեր.
Քնար արնել և միշտ երգել,
Այս աշխարհի ունայնութիւն...

ՉԵՄ ՆԱԽԱՆՁԻԼ ՈՉ ՈՒՐԻՆ. .

—

Լերկ անապատ, ժայռի ծայրին,
Թէթեւ քամուց տատանուում էր,
Վայրի մեխակը լալագին...

—

Ամբողջ ամառ չէր զովացել,
Եւ արևը անխիղճութեամբ,
Արմատներն է միշտ այրել...

—

Նա տեսնում էր իւր ազգակցին,
Փառքով պատուով միշտ ջրում է,
Այգեպանը տօթ օրերին։

—

Եւ նախանձի անհաշտ թոյնը,
Քնքոյշ սիրտը մորմոքեց.
Նա, իր ծնունդն անիծեց։

—

Ինչ էր մեղքս, ասէք խնդրեմ,
Որ ես բուսայ, ժայռի վրայ,
Ինչ մեղք ունեմ որ վայրի եմ...

—

Այսպէս ահա գանգատւում էր
Նա իւր բաղդից տրտնջում,
Մէկ էլ ահա տես ինչ տեսաւ.

—

Տեսաւ յանկարծ, որ մի մանուկ,
Ուրախ երգով մտաւ պարտէզ.
Եւ ուղղակի դէպի մեխակ.

—

Կտրեց նրան ձեռին վազեց,
Տան սիւնի տակ խաղ սկսեց,
Մոռանալով, թողեց գնաց.

—

Զանցաւ մի քիչ, հէնց ժամանակ.
Ահա մի էշ մտաւ բակը,
Եկաւ կանգնեց սիւնի մօտը,

—

Քիչ հոտոտեց փռշտաց,
Եւ անխնայ սմբակներով,
Խեղճ մեխակին տրորեց...

—

Փառք քեզ Աստուած, կոչեց վայրին,
Էլ չեմ ուզում ամենևին,
Լինել մեխակ տնային.

Լաւ է այսպէս, հրկիզ լինել,
Քան էշերու սմակներով
Զրկուել այս լոյս աշխարհից...

ՆՈՐԻՑ ԿԻԿՆԵՑԻ ԵՍ ՄԵՐ ՀԻՆ ԵՐԴՈՒՄ...

—

Մինչ քեզ սիրելը, ես ազատ էի,
Իմ ազատ կամքի, լիազօր տէրը.
Բայց երբ ինձ ազդեց, քո սիրոյ թոյնը,
Իմ ազատ կամքից, ես շուտ զրկուեցի։

—

Ես եղայ անշունչ, ինչպէս մի սև քար,
Ես եղայ գործիք, բռնակալ կամքիդ.
Ես ապրում էի, ոչ թէ ինձ համար,
Այլ մի զոհ էի, կամքիդ, հաճոյքիդ...

—

Երբ խնդում էիր այրող աչքերով,
Ես էլ քեզի հետ, պիտի խնդայի,

Երբ լալիս էիր, աղի արցունքով
Ես էլ քեզի հետ պիտ արտասուէի...

—

Եւ ահա այսպէս, պիտ փոփոխուէի
Քո հզոր կամքի, հրամաններից,
Ինչպէս ամպիկը, երկնակամարի,
Պիտի փոփոխուէր սաստիկ հողմերից.

—

Ինչ է պատճառը, քո այդ վէհութեան.
Եւ ինչ է պատճառ, իմ ստրկութեան.
Ո՞վ է վերջապէս, ինքն իշխան տերը,
Քո քնքոյշ սրտին և զօրեղ կամքին.

—

«Դու. ես դու այո, անգութ արարած,
Որ չ'կշտացար տիրելով կամքիս.
Դու ես որ սրտիկս խլեցիր ինձնից,
Այժմ էլ հեգնում, ու ինձ ծաղրում ես։

—

Դու այն ես պատմում ինչ պիտ պատմէի,
Դու այն ես զգում ինչ ես եմ զգում.

Ես խենդացած եմ ինչու ես ծաղրում,
Միայն քո սէրն է կեանք տալիս ինձի։

—

Բաւէ վերջապէս, հէրիք մորմոքես,
Քո սրրկուհոյ, խոցոտուած սիրաը.
Հերիք է խնդրեմ, ինձ մի յիշեցնիր,
Վշտերիս վրայ վիշտ շատացնիր։

—

Ես գիտեմ սիրել, սիրել յաւիտեան,
Ես գիտեմ տանջուել, սիրուց հառաչել,
Բայց թէ քո առաջ ծածկել ամենայն,
Այդ է պահանջում սիրոյս գաղափար»։

—

Երբ վերև յիշած, ծանր վշտերս,
Տեսայ կրկնակի, սիրելոյս սրտում,
Կրկին կեանք առայ, և խնդուն երես,
Նորից կ'ըկնեցի, մեր դրած, երդում։

ԱՆԷԾՔ ԲԻՒՐ ԱՆԷԾՔ.

—

Ահա քո զոհը, զոհ հաճոյքներիդ,
Զոհ քո մանկական, ուրախ խաղերիդ,
Նա այժմ զուրկ է, իրաւունքներից,
Նա այժմ զուրկ է իւր ազատ կամքից։

—

Տապալալ է նա, յաղթութիւնը քոնն է,
Գլորիր նրան, որտեղ քո կամքն է.
Ձգիր կամ եդեմ, կամ նոյն իսկ դժողք,
Այդ էլ դու գիտես, քոնն է իրաւունք։

—

Նրան խաբեցիր, բայց նա այդ չզգաց,
Դու նրան ծաղրեցիր, բայց նա հաւատաց.
Նա քեզ հաւատաց, սիրեց փայփայեց,
Եւ քեզ իւր միակ դիցուհին դարձրեց։

—

Խորտակուեց կեանքը, և իւր ապագան,
Խորտակուեց նոյնպէս, նոր ծաղկած սէրը.
Այսուհետ նրան ոչ մէկը երբէք,
Չի կարող շոյել սփոփել սիրտը։

Նայիր, ծիծաղիր, անգութ մեղսաւոր,
Նայիր և հրճուիր, քո զոհիդ վրան.
Արածդ անզուսպ գործէ մեղսաւոր,
Խիղճդ կ'տանջէ Կայէնի նման...

—

Նոյն իսկ և երկինք, տիեզերք, երկիր,
Կ'թափին գլխիդ, դժոխքի անէծքներ.
Եւ հրեշաւոր, որդեր և դևեր,
Կ'կրծեն սիրտդ, երկար տարիներ...

—

Բայց դու դեռ այժմ, ուրախ ժպտումես,
Քո առած խաղից, դեռ հիանում ես.
Վայ քեզ այն օրը, երբ խղճիդ թոյնը,
Պիտ քեզ հալածէ, տանջէ, չարչարէ։

—

Անիծում եմ քեզ, անէծք բիւր անէծք,
Թող թափէ գլխիդ, կայծակներ երկինք.
Հիւր, բոց, դժոխ, տանջանք անբաժան
Ահա քեզ բաժին, միշտ և յաւիտեան...

ԷԼ ՉԵՄ ԵՐԳԻԼ ԵՍ ՏԽՈՒՐ.

—

Տխուր երգերս վերջացրի,
Էլ չեմ ուզում ես երգել.
Ճքեղ տեսքը մեր աշխարհի,
Էլ չի կարող ինձ խաբել։

—

Բայց ես նորից, քնար կառնեմ,
Միշտ այս կ'երգեմ ամէն ժամ,
«Սէր բարութիւն եղբայրութիւն
Այս է կենաց վայելչութիւն»..։

ՎԵՐՋ։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆԴԱՍԵՆԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0415119

(204)

2 եւ
1301

Պատրաստ են տպագրութեան համար նոյն հեղինակի հետեւեալ աշխատութիւնները

ա) „ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ“ գինը 40 կ.

բ) „ՄԻ ԲՈՒՌՆ ՀՈՂ.“

բոմանս եւրոպական ձայնանիշներով եւրգի եւ դաշնամուրի համար. երաժշտ. Ն. Բաղդասարեանցի գինը 40 կ.

Բացուած է թէ առաջինի եւ թէ երկրորդի բաժանորդագրութիւնը